Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Ուսուցիչ՝ Սիլվա Խաչատրյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. «ՔՆՆԱԴԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ 4

2. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներկայիս զարգացող տեղեկատվական ժամանակաշրջանում հաճախ է շրջանառվում այն մոտեցումը, որ դպրոցի նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այժմ դպրոցն ունի առավել բարդ առաքելություն՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է:

Նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների քննադատական մտածողության զարգացումը, ուստի սահմանվել են հետազոտության նպատակից բխող հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել քննադական մտածողության էությունն ու զարգացման մեթոդները,
- Մայրենի առարկայի շրջանակներում դրանց կիրառման առավելությունները:

1. «ՔՆՆԱԴԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներին անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական,մշակութային զարգացմամբ:

Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է: Մտածողությունը միջնորդված և ընհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքի հետ: Մտածողությունը իրենից ներկայացնում է «մտքերի ու զուգորդությունների նպատակաուղղված հոսք, որը կարող է հանգեցնել իրականության հանդեպ եզրակացության»: Ճանաչողական բազմաթիվ գիտնականների կողմից՝ Ռուբինշտեյն, Դունկեր, Զելց և այլոք:

Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադական մտածողություն տեխնոլոգիան: Այն առավել հայտնի է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում:

Քննադական մտածողություն տեխնոլոգիան՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու ղարգացման միջոց դեռևս չի ենթարկվել ամբողջական գիտամանկավարժական ուսումնասիրման և վերլուծության:

Տարրական դպրոցներում քննադական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կրում է որոշակի փոփոխություններ, շատ մեթոդներ վերափոխվում են՝

համապատասխանեցվելով կրտսեր դպրոցականների տարիքային ու անհատական առանձնահատկություններին:

Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար, ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապաշարմունքներից, ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ:

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

2. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մայրենի առարկայի ուսուցման շրջանակներում կրտսեր դպրոցականների մոտ քննադական մտածողության զարգացման նպատակով կիրառվում է կարդալու և գրելու միջոցով մեթոդը: Մեթոդի էությունն ինչպես արդեն նախորդ գլխում նշվեց՝ քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով: Մեթոդը նպատակ ունի ուսուցանել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը: Համակարգը կարճ անվանում են ԽԻԿ: Մեթոդն իր մեջ ներառում է.



Գծապատկեր 1. Քննադատական մտածողության զարգացում՝ կարդալու և գրելու մեթոդի փուլերը[1]

ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգն ունի մի քանի փուլեր, անդրադառնանք դրանց:

Առաջին փուլ: ԽԻԿ համակարգի առաջին փուլը խթանումն է, որի նպատակն է՝ խթանել աշակերտների հետաքրքրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու ոլորտում, դրդում է աշխույժ հետաքրքրությամբ վերհիշել ուսուցանվող թեմայի շուրջ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Սկսում են խորհել բուն թեմայի մասին, հարցեր տալիս դրա վերաբերյալ: Այս կերպ աշակերտները կարողանում են լայն ու կայուն հիմք պատրաստել՝ նոր տեղեկատվությունն ընդունելու և այն հիմնավորապես յուրացնելու համար: Մայրենի առարկայի շրջանակներում՝ 4-րդ դասարանում, «Անակնկալը» թեմայի շուրջ նախքան դասին ծանոթանալը, իմ կողմից առաջարկվում է երեխաներին թվարկել այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն «Անակնկալ»-ի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Այստեղ կարևորը նրանց պատկերացումները և ցանկությունները պարզելն է: Քանի որ երեխաներն չորսն են բոլորի տարբերակների մասին տարվում է քննարկում, ընթացքում պարզվում են անհամաձայնությունները: Երբեմն հարցեր եմ տալիս արդյո՞ք բոլորն են համաձայն առաջարկված մտքին և եթե այո կամ ոչ՝ ինչու՞: Յուրաքանչյուր պատասխանից առաջ աշակերտին մտածելու ժամանակ է տրամադրվում, պատասխանելիս անպայման խրախուսում եմ արտահայտած ինքնուրույն կարծիքները:

Մտքերի տարափ մեթոդի նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը նոր նյութի նկատմամբ, վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները: Արտահայտված տարբեր կարծիքներն ու գիտելիքները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը կենտրոնացած պահելու համար: Կարող են առաջանալ նորանոր հարցեր, որոնք նույնպես կխթանեն աշակերտների հետաքրքրությունները նոր նյութի

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

նկատմամբ: Այս փուլում էական գործոն է այն, որ ուսուցիչը հնարավորինս քիչ է խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

Երկրորդ փուլ: Այս փուլը կոչվում է իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողները հաղորդակցվում են նոր տեղեկատվության և նոր գաղափարների: Ամենակարևորն այստեղ խթանման փուլում ձեռք բերված աշակերտների ներգրավման աստիճանի և հետաքրքրության պահպանման կարողությունն է: Բացի այդ՝ աշակերտները վերահսկում են իրենց ընկալումը, փորձում նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց մտքում արդեն առկա իմացություններին: Կան մեթոդներ, որոնց օգնությամբ կարելի է աշակերտների հետաքրքրասիրությունը կայուն պահել: Օրինակ «Անակնկալը» տեքստի վրա աշխատելիս աշակերտներին ասում եմ դուրս հանել տեքստից այն հատվածները, որոնց մասին գիտեն կամ չգիտեն Եթե երեխաները դժվարանում են կարդալ, ինքս եմ կարդում, իսկ աշակերտներն ուշադիր հետևելով տեքստին՝ նշումներ են կատարում:

Երրորդ փուլ: ԽԻԿ համակարգի վերջին փուլը կշռադատման փուլն է: Այս փուլի նպատակն է՝ աշակերտների միջև ծավալել քննարկում, որի ընթացքում միմյանց հետ հաղորդակցմամբ, նրանք ծանոթանում են տարբեր գիտելիքների, պատկերացումների, մտածում դրանց շուրջ, հարցեր տալիս, մեկնաբանում, բանավիճում, հակադրվում: Արդյունքում՝ կառուցվում է սեփական իմացական դաշտը: Այս փուլում աշակերտն իսկապես յուրացնում, սեփականացնում է նոր գիտելիքը, ընկալածն արտահայտում է սեփական բառերով ու ձևակերպումներով:

«Անակնկալը» տեքստի կարդալուց և նշումներ կատարելուց հետո աշակերտները ներկայացնում են իրենց գրառումները: Ապա դրանց շուրջ քննարկում է կազմակերպվում՝ իմ ուղղորդող հարցերի օգնությամբ: Անդրադառնալով խթանման փուլում մտքերի տարափի ժամանակ արտահայտվածն ողջ դասարանով համեմատում և քննարկում են այն կետերը, որոնց վերաբերյալ համաձայնություն կամ տարաձայնություններ են ի հայտ եկել: Պարզաբանվում է, թե տեքստը կարդալուց հետո փարատվեցի՞ն արդյոք նրանց

կասկածները: Վերջում աշակերտներին հանձնարարվում է նկարել տեքստին վերաբերող որևէ կերպար կամ տեսարան և ցույց տալ միմյանց:

Այս աշխատանքի նպատակն է՝ օգնել աշակերտին ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իր ունեցած պատկերացումները:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական մակարդակն արդեն համարժեք արձագանք է գտնում աշակերտների վերաբերմունքի մեջ, երբ սովորողներն իրենք արդեն ուսուցման ընթացքում դրսևորվում են որպես հավասարազոր որոնողներ ու կշռադատողներ: Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ունի ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում» հետազոտության շրջանակներում իմ կողմից իրականացվել է փոքր հետազոտություն չորրորդ դասարանի աշակերտների շրջանում՝ նպատակ ունենալով պարզելու երեխաների մոտ քննադական մտածողության աստիճանը և զարգացմանն ուղղված համապատասխան քայլերի մշակմանը:

Հետազոտությանը մասնակցել են չորս աշակերտ, ձևավորվել է երկուական խումբ, որոնց տրվել էր վերլուծելու և ներկայացնելու «Իշխանը» տեքստը: Նախքան տեքստի ընթերցանությունը խմբերը առանձին նշում են թե իրենց պատկերացմամբ՝

- ո՞վ է Իշխանը,
- մեր առօրյա կյանքում ու՞մ ենք անվանում Իշխան:

Այնուհետև աշակարտներին տրվեց տեքստը, որպեսզի կարողանան ծանոթանալ տեքստին, առանձնացնել իրենց համար ծանոթ կետերը:

Ընթերցանությունից հետո կողմերը ներկայացնում են ըստ իրենց ընկալմամբ.

- որտե՞ղ և ինչպե՞ս էր ապրում Իշխանը,
- Իշխանն ինչպե՞ս էր ընդունում հեռավոր երկրներից եկած թռչուններին,
- ի՞նչ հրամաններ էր տալիս Իշխանը,
- արդյո՞ք ճիշտ էին Իշխանի հրամանները,
- ի՞նչ պատահեց Իշխանի թագավորությանը,
- եթե դու լինեիր Իշխանը Ի՞նչ հրամաններ կտայիր:

Այս ընթացքում խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, լսում միմյանց, փոխանակում կարծիքներ և ավելացնում սեփական գիտելիքները:

Հետազոտության արդյունքում կատարված վերլուծություններից պարզ դարձավ, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան տարրական դպրոցում կիրառելի է և արդյունավետ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը մեծապես նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու

զարգացմանը: Տարրական դպրոցում այն կիրառելիս առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների, ուսուցանվող նյութին համապատասխան մեթոդների ընտրության դրանց ժամանակատար լինելու հետ:

Ստացված արդյունքները նաև վկայում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է ոչ միայն սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք, կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի: Նշենք, որ քննադատական մտածողության զարգացման շնորհիվ աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ, նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում և կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004
2. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գ. 2006.
3. ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ:
4. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002